ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

18 սեպտեմբերի, 2018թ. Երևան

Տեղի ունեցավ «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի ղեկավար հանձնաժողովի առաջին նիստը

Այսօր՝ սեպտեմբերի 18-ին, տեղի է ունեցավ Եվրամիության կողմից ֆինանսավորվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի ղեկավար հանձնաժողովի առաջին նիստը:

Նիստին ներկա էին ծրագրային կոնսորցիումի անդամները, ծրագրի ղեկավար հանձնաժողովի անդամները, ծրագրի ղեկավար հանձնաժողովի դիտորդները՝ ծրագրի շրջանակներում ենթադրամաշնորհառու կոալիցիաների ներկայացուցիչները, ինչպես նաև Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության համագործակցության բաժնի միջազգային օգնության/համագործակցության պաշտոնյա Պաուլիոս Ստրելսիունասը:

«Անկեղծ ասած, երբ մենք ստորագրեցինք այս դրամաշնորհը՝ մեծ հույսեր ու ակնկալիքներ ունեինք, իսկ այս տարվա ապրիլյան իրադարձություններից հետո մեր այս ծրագրից ավելի մեծ ակնկալիքներ ունենք: Վերջին երկու ամիսների ընթացքում տեսնում ենք, որ գործը մեծ թափ է հավաքել, միաժամանակ գտնում ենք, որ կատարելագործման համար միշտ էլ տեղ կա»,- նշեց Պաուլիոս Ստրելսիունասը:

Կարեն Զաղոյանը, ով «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի ղեկավարն է և Իրավաբանների հայկական ասոցիացայի նախագահը, ներկայացրեց ծրագիրը, դրա նպատակը, թիրախային ոլորտները, կատարված աշխատանքներն ու դրանց արդյունքները:

34 ամիս տևողությամբ այս ծրագիրը մեկնարկել է 2016 թվականի դեկտեմբերի 15-ին և դրա իրականացման ընդհանուր արժեքը 2 միլիոն 222 հազար եվրո է, որից 2 միլիոն եվրոն հատկացվելու է Եվրամիության կողմից:

«Ծրագրի հիմնական նպատակն է մեծացնել քաղհասարկության կազմակերպությունների ազդեցությունը Հայաստանում հանրային քաղաքականությունների բարելավման, մշտադիտարկման, փոփոխությունների մշակման գործում: Առանձին նպատակներն են քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողությունների զարգացումը 4 ոլորտում՝ փաստարկված հանրային քաղաքականությունների մշակում, կոալիցիաների կառուցում, հանրային վերահսկողության իրականացում և կառավարության և տեղական ինքնակառավարման մարմինների հետ կառուցողական և կայուն երկխոսության կառուցումն ու զարգացումը»,- ասաց Կարեն Զաղոյանը:

Արդեն իսկ ծրագրի շրջանակում՝

* Ստեղծվել և իրականացվել է հատուկ հավասագրային կրթական ծրագիր 108 ՔՀԿ ներկայացուցիչների համար, որն անցկացվել է Հայաստանի ամերիկյան համալսարանի կողմից:

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն

Հեռախոս՝ +37410 54 64 94

Իրավաբանների հայկական ասոցիացիա

Հասցե Նալբանդյան 7, բն. 2 Երևան, Հայաստան, 0010

Հեռախոս՝ +37410 54 01 99

Եվրահանձնաժողովը ԵՄ գործադիր մարմինն է: Եվրամիությունն ունի 28 անդամ երկիր, որոնք որոշել են աստիճանաբար կապակցել իրենց նոու-հաուն, ռեսուրսներն ու ուժերը: 50 տարվա ընդարձակման ժամանակահատվածում նրանք միասին ստեղծել են կայունության, ժողովրդավարության ու կայուն զարգացման տարածք՝ պահպանելով մշակութային զանազանությունը, հանդուրժողականությունը և յուրաքանչյուրի անկախությունը: Եվրամիությունը հանձնառու է կիսել իր ձեռքբերումներն ու արժեքները իր սահմաններից այն կողմ գտնվող երկրների ու ժողովուրդների հետ:

*Հիմնադրվել և զարգացվում է ՔՀԿ ինկուբատորների ինստիտուտը: Երևանի և 7 մարզերից ինկուբատորներում ներառվել է 70 ՔՀԿ, որոնց ներկայացուցիչները մասնակցել են ավելի քան 40 հանդիպումների՝ կենտրոնական և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների հետ: Նրանց համար անցկացվել է 53 դասընթաց: 70 ՔՀԿ-ից 54-ին տրամադրվել է անհատական խորհրդատվություն՝ հանրային քաղաքականությունների մոնիտորինգային և բարելավման ծրագրերի վերաբերյալ:
Առաջիկայում նախատեսվում է ինկուբատորների մասնակիցների համար մինչև 5.5 միլիոն դրամ արժողությամբ 33 ենթադրամաշնորհների մրցույթ:

*ՔՀԿ կոալիցիաներին տրամադրվել է մինչև 25 միլիոն դրամ արժողությամբ 9 ենթադրամաշնորհ՝ 9 տարբեր ոլորտում ծրագրեր իրականացնելու համար: Այս կոալիցիաները ներածական հանդիպումներ են ունեցել համապատասխան նախարարությունների հետ: Իրավաբանների հայկական ասոցիացիան՝ սերտ համագործակցում է կոալիցիաների հետ մի շարք ներքին քննարկումների միջոցով: Ծրագիրն իրականացնող կոնսորցիումի անդամ Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի աջակցությամբ անցկացվել է դեռևս town hall ձևաչափով 3 հանդիպում:

*ՔՀԿ-ների այլ կարողությունների զարգացման նպատակով անցկացվել է 5-օրյա դասընթաց ինկուբատորների համակարգողների և մենթորների համար, որին մասնակցել են նաև կոալիցիաները: 17 ad hoc հանրային սեմինարներ և քննարկումներ են անցկացվել թիրախային 9 ոլորտում թեմատիկ խնդիրների և ՀԿ օրենսդրության զանազան հարցերի շուրջ: 54 դասընթացների շարք է անցկացվել Երևանի և մարզերի ՔՀԿ-ների համար, որոնց մասնակցել են 645 ՔՀԿ-ներից 772 հոգի:

Նշենք նաև, որ ծրագրի ղեկավար հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա 2019 թվականի մարտի 20-ին:

«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրն իրականացվում է ԵՄ ֆինանսավորմամբ՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի կողմից գործընկերներ «Ագորա Սենթրլ Յուրոպի» ՀԿ-ի (Չեխիա), «Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն-ՍԻՎԻՏԱՍ» ՀԿ-ի, «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» ՀԿ-ի, «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի և «Հայաստանի համայնքների միություն» իրավաբանական անձանց միության հետ համագործակցությամբ:

Ծրագրի նպատակն է մեծացնել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) և դրանց կոալիցիաների/ցանցերի ազդեցությունը հանրային քաղաքականության մշակման գործընթացի վրա: Սա հնարավորություն կտա կազմակերպություններին (ովքեր արդեն իսկ աշխատում են թիրախային կոալիցիաներում) ձեռք բերել նոր ռեսուրսներ, քաղհասարակության փորձագետներին միավորել և խրախուսել իրենց մասնակցությունը տեղական և ազգային քաղաքականությունների օրակարգի ձևավորմանը, հատկորոշել ընդհանուր խնդիրներն ու առաջնահերթությունները և դիմել կառավարությանը՝ կառուցողական և ռազմավարական քաղաքականության վերաբերյալ նախաձեռնություններով:

Ծրագրի շրջանակներում ենթադրամաշնորհներ կտրամադրվեն ՔՀԿ-ներին և ՔՀԿ-ների կոալիցիաներին, որոնք կուղղվեն հանրային քաղաքականությունների զարգացմանն ու կունենան շոշափելի արդյունքներ **9 թիրախային ոլորտում**, որոնք են արդարադատությունը, մարդու իրավունքները, հանրային ֆինանսների կառավարումը, բիզնեսը, կրթությունը, սոցիալական ոլորտը. հաշմանդամություն ունեցող երեխաների սոցիալական ներառում, գյուղատնտեսությունը, տնտեսությունը, էներգետիկան:

Իրավաբանների հայկական ասոցիացիան (ԻՀԱ) ստեղծվել է 1995թ.-ին: ԻՀԱ-ի առաքելությունն է նպաստել Հայաստանում իրավունքի գերակայության, ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացմանը, որտեղ բնակչությունն իրազեկ է, իսկ նրա իրավունքները՝ պաշտպանված: Մինչև 2016 թ. փետրվար ամիսը ԻՀԱ-ի անվանումն էր Հայասատանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա:

Աստղիկ Կարապետյան
Հանրային կապերի համակարգող

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն

Հեռախոս՝ +37410 54 64 94

Իրավաբանների հայկական ասոցիացիա

Հասցե Նալբանդյան 7, բն. 2 Երևան, Հայաստան, 0010

Հեռախոս՝ +37410 54 01 99

Եվրահանձնաժողովը ԵՄ գործադիր մարմինն է: Եվրամիությունն ունի 28 անդամ երկիր, որոնք որոշել են աստիճանաբար կապակցել իրենց նոու-հաուն, ռեսուրսներն ու ուժերը: 50 տարվա ընդարձակման ժամանակահատվածում նրանք միասին ստեղծել են կայունության, ժողովրդավարության ու կայուն զարգացման տարածք՝ պահպանելով մշակութային զանազանությունը, հանդուրժողականությունը և յուրաքանչյուրի անկախությունը: Եվրամիությունը հանձնառու է կիսել իր ձեռքբերումներն ու արժեքները իր սահմաններից այն կողմ գտնվող երկրների ու ժողովուրդների հետ:

Հեռ.՝ 540199
Էլ. Հասցե՝info@armla.am
Կայք՝ http://www.armla.am, http://ccd.armla.am

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն

Հեռախոս՝ +37410 54 64 94

Իրավաբանների հայկական ասոցիացիա

Հասցե Նալբանդյան 7, բն. 2 Երևան, Հայաստան, 0010

Հեռախոս՝ +37410 54 01 99

Եվրահանձնաժողովը ԵՄ գործադիր մարմինն է: Եվրամիությունն ունի 28 անդամ երկիր, որոնք որոշել են աստիճանաբար կապակցել իրենց նոու-հաուն, ռեսուրսներն ու ուղիները: 50 տարվա ընդարձակման ժամանակահատվածում նրանք միասին ստեղծել են կայունության, ժողովրդավարության ու կայուն զարգացման տարածք՝ պահպանելով մշակութային զանազանությունը, հանդուրժողականությունը և յուրաքանչյուրի անկախությունը: Եվրամիությունը հանձնառու է կիսել իր ձեռքբերումներն ու արժեքները իր սահմաններից այն կողմ գտնվող երկրների ու ժողովուրդների հետ: